Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԻ ԵՒ ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԱՂՈԹԱՍՐԱՀԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(27 հուլիսի, 2025 թ.)

Մեծազնի՛վ տիկին Անահիտ Յակուբյան,

Յակուբյան ընտանիքի հարգարժան անդամներ,

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Այսօր՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին, աղոթական զգացումներով կատարեցինք գեղեցկակերտ Կաթողիկոսական դամբարանի եւ մոմավառության աղոթասրահի բացման արարողությունը։ Գոհություն ենք մատուցում առ Բարձրյալն Աստված, որ Հայոց հոգեւոր կենտրոնում՝ Սուրբ Էջմիածնում, մեր ժողովրդի հոգեւոր մխիթարության, հավատքի զորացման նվիրական մի նոր սրբատեղի հառնեց։

Հայրապետների շիրիմների ամփոփման համար պանթեոն կառուցելու այսպիսի նախաձեռնություն ծրագրվել էր տակավին 1955 թ.՝ Վազգեն Ա. երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք։ Մեզ համար մեծ ուրախություն եղավ, որ նախապես տեղյակ չլինելով այս նախաձեռնությանը՝ Մենք նույնպես մտահղացումը ունեցանք Կաթողիկոսական դամբարան հաստատելու Սուրբ Էջմիածնում, որն այսօր արդեն հոյաշեն կերպով իրագործված՝ հավատավոր մեր ժողովրդի համար ծառայելու է նաեւ որպես մոմավառության աղոթասրահ։ Փառք ենք տալիս Ամենակալ Աստծուն, որ մեծանուն բարերար տիար Գառնիկ Յակուբյանի եւ իր ազնիվ կողակցի՝ տիկին Անահիտի հովանավորությամբ կյանքի կոչվեց այս ձեռնարկումը։

Կաթողիկոսական դամբարանը, սիրելինե՛ր, ամփոփավայրն է լինելու մեր Սուրբ Եկեղեցու ննջեցյալ Հովվապետերի, որոնց կյանքը եղել է ամբողջանվիրում Աստծուն, ազգին ու հայրենիքին։ Դամբարանը գալիք սերունդներին յուրովի հիշեցնելու է Ամենայն Հայոց Կաթողիկոսների հոգեխնամ առաքելության մասին, որով բարեզարդվել ու ծաղկել է հա-

մայն մեր ժողովրդի ազգային եւ եկեղեցական անդաստանը։ Մեր Սուրբ Եկեղեցու երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոսների ծառայությունը լի է եղել զոհողությամբ, Քրիստոսապատգամ սիրո, արդարության եւ ճշմարտության քարոզչությամբ, բայց նաեւ հայրական հորդորով ու քաջալերությամբ՝ ապրելու եւ արարելու առ Աստված հավատով հանուն ազգի ու հայրենյաց։ Մեր երանաշնորհ Հայրապետներն իրենց ողջ գործունեության ընթացքում եղել են հավատքի քաջ վկաներ, հույսի լուսատուներ մութ ու խավար ժամանակների մեջ, այլեւ արիության ու հաստատակամության օրինակ մեր ժողովրդի համար՝ ծառացած դժվարություններն ու նեղությունները հաղթահարելու եւ նորանոր հաջողություններ արձանագրելու։ Հայոց երանաշնորհ Հայրապետների կյանքն ու գործը դարձել են աստվածահաճո ընծա ազգին ու հայրենիքին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատգամի համաձայն. «Թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է»,— ասում է Քրիստոս (Մատթ. Ե. 16)։

Սիրելի՛ հավատացյալներ, մեր օրերում, երբ տարբեր կեղծ գաղափարախոսություններով խաթարվում է մեր արժեհամակարգը, եղծվում ու նենգափոխվում են հոգեւոր ընկալումները, այսպիսի եկեղեցական շինությունները, սրբավայրերն ու ուխտատեղիները իրենց կրոնական եւ ծիսական կարեւոր նշանակությամբ հավատքի զորացման, հոգու փրկության եւ աստվածահաճո կյանքի ամրապնդման օրհնաբեր օջախներ են։ Այս կառույցը, արդարեւ, սոսկ քարեղեն շինվածք չէ, այն աղոթքի տուն է, հավատացյալների ապավինության վայր՝ Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների մատուռներով, որտեղ պաշտամունքային արարողություններ են մատուցվելու, եւ հավատացյալներն իրենց սրտառուչ հայցն ու աղոթքն են վերառաքելու Տիրոջը։ Այսպիսի օրհնյալ վայրում հավատացյալի հետ հանդիպում են ժամանակն ու հավերժությունը, երկնավորն ու երկրավորը, քանզի հոգուց բխած աղոթքները երկինք են հասնում եւ աստվածային օրհնությունն են հեղում Փրկչին հուսացողների սրտերին։

Այս վայրը, սիրելինե՛ր, ինչպես նշեցինք, նաեւ մոմավառության աղոթասրահ է։ Վառվող մոմը այս աղոթավայրում նույնպես հավատքի լույսի, տերունական ներկայության խորհուրդն ունի՝ ըստ Քրիստոսի խոսքի. «Ես եմ աշխարհի լույսը. ով Իմ հետեւից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Հովհ. Ը. 12)։ Եւ որքան նշանակա-

լի է, երբ այդ մոմերն առկայծում են այն վայրում, որտեղ ամփոփվելու են աճյունները Հայրապետների, ովքեր որպես հավատո ջահակիրներ ջանացել են հավատացելոց բարեպաշտական զգացումների զորացման համար, որպեսզի ազգիս զավակները պահպանեն կապը Աստծու հետ, ամրապնդեն հավիտենական կյանքի հույսը, արժանի դառնան հարության խոստմանը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, «որ կործանեց մահը եւ լուսավոր դարձրեց կյանքն ու անմահությունը»,— ինչպես ասում է առաքյալը (Բ Տիմ. Ա. 10)։

Կաթողիկոսական դամբարանի եւ մոմավառության աղոթասրահի կառուցումը ազգիս զավակների անշիջանելի հավատքի, բարեգործության ազնիվ ոգու, արժանավորին արժանին մատուցելու երկնահաճո արտահայտությունն է։ Աղոթքով ու երախտագետ զգացումով մեծարանք ու գնահատանք մատուցենք մեծանուն բարերարին՝ հոգելույս տիար Գառնիկ Յակուբյանին, եւ իր մեծազնիվ տիկնոջը՝ Անահիտին, եւ իրենց սիրասուն զավակներին։ Բարեպաշտ Յակուբյան ընտանիքի աստվածասիրության ու բացառիկ ազգանվիրումի մասին են վկայում նրանց եկեղեցանվեր բազում գործերը։ Լուսահոգի Գառնիկ Յակուբյանի մշտավառ հիշատակը Մեր սրտում, ի գնահատություն այս գովարժան իրագործման, Հայրապետիս համար հոգեւոր մխիթարություն է մեծազնիվ տիկին Անահիտ Յակուբյանին շնորհել «Սուրբ Էջմիածին» բարձրագույն շքանշան, իսկ իր որդուն՝ Արամ Յակուբյանին, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշան։

Աղոթում ենք, որ տերունաշնորհ հավատքի լույսը մշտավառ լինի մեր ժողովրդի հոգում, եւ այս սրահից եւս հանապազ հնչի հայցը առ Աստված հայրենյաց խաղաղության, ազգիս բարօրության, մեր Սուրբ Եկեղեցու պայծառության, այլեւ Բաքվում գերության մեջ գտնվող հայորդիների, բանտարկված մեր Սրբազանների, մեր ազգային բարերարի եւ անարդարորեն բանտերում պահվող բոլոր նեղյալների համար։

Թող Տիրոջ շնորհները, սերը եւ ողորմությունը լինեն մեզ եւ ամենքի հետ այսօր եւ միշտ. ամեն։